

ՀՈՐԳԵՒՈՐ ԸՆԹԵՆՑՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱԲԷՐՆԵՐ*¹

ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԹՂԹԻ ԺԲ.-ԺԴ. ԳԼՈՒԽՆԵՐԸ
(ՄԱՍ Ա.)

Այսպիսով լեզուախօսության վերաբերեալ Մարկոսի Անտարանի եւ Գործք Առաքելոցի գրեթէ բոլոր տեղերում օգտագործուած *γλωσσα λαλειν*-ը միանշանակ նոյն իմաստով է կիրառուած: Մնում է քննութեան ենթարկել Կորնթացիների Ա. թղթի ԺԲ.-ԺԴ. գլուխները: Հենց այդ հատուածին են յղում ապիս մերօրեայ գրեթէ բոլոր հոգեգալստականները, նեո-հոգեգալստականները, խարիզմատ շարժման բոլոր ճիւղաւորումները: Բայց, հենց այդ վկայութիւններն են, որ ի վերջոյ չեն խրախուսում գլոսսալալիան. այստեղ է, որ Պօղոս առաքեալը ուզում է այդ թղթով շտկել Կորնթոսի եկեղեցու արատաւոր վիճակը, որի պատճառներից մէկն էր այդ գլոսսալալիան:

Կորնթոսի եկեղեցին գտնուում էր մի վիճակում, որն Առաքեալը ներկայացնում է այսպէս. «Եւ ես, եղբայրներ, չկարողացայ խօսել ձեզ հետ՝ իբրեւ հոգեւորների հետ, այլ խօսեցի իբրեւ մարմնաւորների հետ: Իբրեւ մանուկներ ի Քրիստոս կաթ տուեցի ձեզ եւ ոչ՝ կերակուր, քանի որ դեռ կարող էի չէիք. եւ հիմա էլ կարող չէք, քանզի դեռ մարմնաւոր էք» (Ա. Կորնթ. Գ. 1-2): Այդ մարմնական վիճակը, ամբարիշտ բարքերը, ուր ամենից շատ տարածուած էր գլոսսալալիան, անշուշտ արժանի են պարսաւանքի եւ ոչ ընդօրինակման, ինչպէս անում են ժամանակակից գլոսսալալիները: Ընդհակառակը, նրանք, ովքեր ձգտում են նմանուել կորնթացիներին դեռ չեն հասկացել Պօղոս առաքեալի նամակի նպատակն ու բովանդակութիւնը: Պօղոս առաքեալի նպատակն էր Կորնթոսի «մարմնաւոր» եկեղեցին հանել այդ վիճակից՝ նրանց աւելի լաւ ճանապարհ ցոյց տալով: Իսկ այդպիսի ընկած վիճակում գտնուող եկեղեցու «անձնագիրը» գլոսսալալիան էր:

Այդ «անձնագրով» առաջնորդուող հոգեգալստականները այսօր էլ նոյն վիճակում են. բաժանումներ, վիճաբանութիւններ եւ մասամբ սոցին: Գլոսսալալիայով միատրուած ժողովուրդը չի կարող քրիստոնէական գիտելիքներին հաղորդ լինել, խոնարհուել, հնազանդուել Անտարանի խօսքին, քանի որ այն օկկուպ բնոյթ ունի: Նրանց հենց գլոսսալալիան է խանգարում խոնարհուելու, սիրոյ ճանապարհով

*Սկիզբը «Էջմիածին», 2012, Ա.-ԺԲ., 2013, Ա.-Է.:

ընթանալու: Դրա փոխարեն գլոսապալիան նրանց «շնորհում է» առանձնայատուկ հպարտություն, մեծամտություն, ուրիշներին անարգելու յանդգնություն, որը երբեք քրիստոնեական չի կարելի որակել:

Կորնթոսը զոնուելով առեւտրական մեծ ճանապարհների խաչմերուկին, ունենալով զարգացած առեւտուր՝ իր ժամանակին մարմնավորում էր անբարոյական կեանքը, անբարշտությունը: Առաքելական ժամանակներում Կորնթոսը նշանակել էր հարբածների, անառակների խորհրդանիշը համարուող քաղաք: Անգամ ժամանակակից անգլերենում կորնթացի անականը նշանակում է աշխարհիկ մարդ, հարուստ մարդ: Պողոսի՝ կորնթացիներին ուղղուած թղթերից իմանում ենք, որ այդ բոլոր արատաւոր երևոյթները փողոցից տեղափոխուել էին եկեղեցի, եւ առաքելալը փորձում է արմատախիլ անել այդ արատները, դրան նուիրելով ԺԲ.-ԺԴ. գլուխները:

Պողոս առաքելալը, թուարկելով Սուրբ Հոգու պարգեւները (Ա. Կորնթ. ԺԲ. 4-11) վերջնընթեր տեղում դնում է լեզուների պարգեւը եւ վերջում՝ թարգմանութեան պարգեւը: Առաքելալը չէր թերագնահատում լեզուների շնորհը, եթէ անգամ այն լինէր «հրեշտակային», բայց պահանջում էր, որ անպայման այն թարգմանուի՝ հասկանալի լինելու համար: Պողոսը գիտէր, որ այդ ճանապարհով «կեղծ» լեզուախօսութիւնն էլ կարող էր սողոսկել եկեղեցուց ներս: Ուստի Պողոսը ցոյց է տալիս մէկ ուրիշ, աւելի լաւ ճանապարհ՝ սիրոյ ճանապարհը:

«Մի՞թէ բոլորն էլ առաքելայինք են, մի՞թէ բոլորն էլ մարգարէներ են, մի՞թէ բոլորն էլ զօրութիւններ գործողներ են, մի՞թէ բոլորն էլ բժշկելու շնորհ ունեն, մի՞թէ բոլորն էլ լեզուներ են խօսում, մի՞թէ բոլորն էլ թարգմանում են» (Ա. Կորնթ. ԺԲ. 29-30):

Ինչպէս երեւում է հատուածի կառուցուածքից, Պողոսը տողերի արանքում տալիս է դրանց պատասխանը՝ Ո՛հ:

Պողոսը քաջ գիտակցում էր, որ կորնթացիների՝ գլոսապալիայի հանդէպ ունեցած այդ ձգտումը բացասական արդիւնք կբերէր, եւ իր աշխատանքը կմնար անպատու, ուստի այդ մտավախութեամբ էլ ցոյց է տալիս նոր ճանապարհը՝ սիրոյ ճանապարհը:

Այո՛, ասում է նա,- լեզուները կլռեն, մարգարէութիւնները կջքանան, բայց սէրը կմնայ (Ա. Կորնթ. ԺԳ. 8-10):

Յաջորդ համարներում առաքելալը բերում է երեխայութեան օրինակը, ասելով «երբ տղամարդ դարձայ, երեխայական բաները թողեցի»: Ինչ նկատի ունէր առաքելալը: Պարզ է որ 11-րդ համարը հենց պատասխանն է 8-10 համարների հարցադրման: Պողոս առաքելալը կորնթացիների հետ խօսում էր պարզ, հասկանալի, մատչելի պատկերներով, ոչ այնպէս, ինչպէս հռոմեացիների հետ, ուր արծարծում է բարդ աստուածաբանական մտքեր, կամ եբրայեցիներին ուղղուած նամակի նման, որի ընթերցողները զոնէ անգիր պիտի իմանային Հնգամատեանը՝ հասկանալու կամ հետեւելու Պողոսի մտքի ընթացքին: Կորնթացիները մարմնաւոր էին, դեռ երեխայի նման էին մտածում ու ասլրում:

Երբ երեխան խաղում է խաղալիքներով, գովելի է եւ ուրախութիւն է ծնողների համար, բայց երբ երեխան մեծանալով դարձեալ սկսում է խաղալ խաղալիքներով, այդ արդէն վշտացնում է ծնողներին եւ նրանք ստիպուած դիմում են համապատասխան բժշկի: Պօղոս առաքեալն էր այդ բժիշկը, որ փորձում էր բժշկել եւ մարմնաւոր եկեղեցին հոգեւոր եկեղեցու վերածել:

Պօղոսն ասում է, որ այլ լեզուներով խօսելը ուղղուած է Աստծուն ու ոչ թե՛ մարդկանց, քանի որ մարդիկ այն չեն հասկանում: Ուստի, նա թելադրում է կորնթացիներին, որ աւելի լաւ է հետամուտ լինեն մարգարէութիւն անելուն, քան թե՛ լեզուներ խօսելուն: Լեզուները անհասկանալի են, մարգարէութիւնները՝ հասկանալի, ուրեմն եւ շինութիւն է եկեղեցու համար (Ա. Կորնթ. ԺԳ. 1-4):

Պօղոս առաքեալը, լինելով Քրիստոսի եկեղեցու մեծագոյն ռազմավարը՝ ստրատէգը, չէր բաւարարում ներկայով, նա հեռուն էր նայում, նրա համար եկեղեցու շինութեան մասին հոգ տանելը շատ աւելի կարեւոր էր, քան՝ որեւէ անհատի շինութիւնը, քանի որ անհատը կմեռնէր՝ իր պարգեւի հետ միասին, բայց եկեղեցին է, որ պիտի փոխանցէր Յիսուսի Աւետարանը մարդկանց սերունդներին, եկեղեցին է, որ պիտի ապրէր ու յարատեւէր մինչեւ Տիրոջ Երկրորդ գալուստը: Եւ այդ նպատակին հասնելու համար Պօղոսը աստիճանաբար սկսում է իր «բուժման» ծրագրի իրականացումը. կորնթացիներին պէտք էր հանել մարմնաւոր վիճակից, որից յետոյ՝ արդէն մնացած հարցերը կարելի էր լուծել: Մարմնաւոր եկեղեցին ապագայ չունի, այն հիւանդ մարմին (օրգանիզմ) է, որը վաղ թէ ուշ մահանալու է:

«Ուզում եմ, որ բոլորդ էլ լեզուներ խօսէք, - ասում է Պօղոսը, որպէսզի չվիրաւորի նրանց անձը, - բայց աւելի լաւ է մարգարէանալ» (Ա. Կորնթ. ԺԳ. 5):

Ինչ էր առաքելական այդ ժամանակներում նշանակում մարգարէանալ: Առաքելական ժամանակներում չկային այսօրուայ նման տպագրուած Սուրբ Գրքեր, եկեղեցիների համար հեղինակութիւններն էին որոշում, թէ որն է ճիշտը, եւ որը՝ կեղծը: Մարգարէութիւնը Սուրբ Հոգու այն պարգեւն էր, որն ունեցողը իր սրբակենցաղ կեանքով եւ վարքով կարողանում էր Աստծու խօսքը հասցնել եկեղեցուն, մարդկանց, եւ հէնց դա էր Պօղոսը համարում շինութիւն եկեղեցու համար: Այդ մի քանի համարներում, փաստօրէն, Պօղոսը փորձում է մարմնաւոր կորնթացիներին բարձրացնել հոգեւոր վիճակի: Այո՛, մարգարէութեան, Աստծու խօսքի պակասն էր, որ կորնթացիներին դատապարտել էր մարմնական վիճակի մէջ մնալու, եւ միայն Աստծու խօսքը պիտի կարողանար նրանց դուրս հանել ճահճային այդ վիճակից:

Նոյնը կարելի ասել նաեւ այսօրուայ հոգեգալստականների եւ խարիզմատների վերաբերեալ. Աստծու խօսքի խորհուրդները եւ խորութիւնը անհասանելի են դառնում նրանց համար: Գլոսալալիայի ֆենոմէնը թոյլ չի տալիս նրանց դուրս գալ այդ ճահիճից եւ աճել Աստծու խօսքով, նրանց որդեգրած «մարտավարութիւնը» թոյլ չի տալիս աճելու, մեծանալու, դրա համար էլ նրանք մնում են նոյն ճահճային՝ մարմնաւոր վիճակում:

Այսպիսով, եզրակացնում է Պօղոս առաքելայր, լեզուները նշան են անհաւատների համար, այն է՝ երբ դրանք հասկանալի լինեն անհաւատին, ու ոչ թե՛ անհիմաստ արտաբերումներ լինեն (ԺԴ. 22): Նախորդ համարում (ԺԴ. 21) Պօղոսը մեջբերում է Հին Կտակարանից (Բ. Օր. ԻԸ. 49 եւ Եսայի ԻԸ. 11-12) եւ, որպէս Հին Կտակարանի մեկնիչ, յիշեցնում, որ Եսային խօսեց իր ազգի լեզուով, նրան չսեցին, բայց կզան ուրիշներ, որոնք այլ լեզուով կխօսեն, որը նրանք այլեւս չեն հասկանայ (խօսքը ասորեստանցիների մասին էր): Այսինքն, Պօղոսը այդ մեջբերումն անելիս եւ այլ լեզուներով խօսելը փաստելիս նկատի ուներ մարդկային հասկանալի լեզուն, ու ոչ թե՛ անհասկանալի ոչ մարդկային լեզուներով խօսակցութիւնը կամ անհիմաստ հնչիւնների արտաբերումները:

Ընդհանրացնելով, Պօղոսը բերում է շատ համոզիչ մի փաստարկ (ԺԴ. 24-25). ո՛րն է աւելի լաւ, երբ մարդիկ լսելով մարգարէութեան խօսքը, դարձի գան ու գղջալով՝ ծնկի իջնեն ու Աստծուն փառաբանեն, թե՛ լսելով անհիմաստ մի արտաբերութիւն, այն էլ ոչ թե՛ մէկ կամ երկու հոգու, այլ՝ տասնեակների անհիմաստ արտաբերումներ, թողնեն ու հեռանան, համարելով այդ «խրախճանքը» դեւերի խրախճանք:

Մի քանի կարեւոր խրատներ էլ է տալիս Պօղոսը կորնթացիներին (ԺԴ. 26-33), որոնք կարգ ու կանոն պիտի հաստատէին եկեղեցում: Դրանք են.

- եթե՛ անգամ խօսում են լեզուներով, ապա ամենաշատը երկու կամ երեք հոգի թող խօսեն.

- եթե՛ չկայ թարգմանութիւն, թող լռեն, իրենց մտքում աղօթեն Աստծուն.

- «մարգարէութեան հոգին ենթարկւում է մարգարէացողին, որովհետեւ Աստուած խռովութեան Աստուած չէ, այլ՝ խաղաղութեան» (ԺԴ. 32-33):

Արդի խարիզմատները, որ գրեթե՛ նոյն վիճակում են, ինչ որ կորնթացիները, այդ վիճակից դուրս գալու եւ իրենց բարբաջանքը սուրբգրային համարելու համար բերում են մի փաստարկ, որն իբր ամէն ինչ բացատրում է եւ հասկանալի դարձնում: Այդ փաստարկը հետեւեալն է. կորնթացիների թղթում լեզուները այլ են քան Մարկոսի Աւետարանում եւ Գործք Առաքելոցում, ուր, ինչպէս ցոյց տուեցինք, լեզուները մարդկային հասկանալի լեզուներ են: Այսինքն՝ նոյն բառի երկու իմաստների առկայութիւն Գործքում եւ Պօղոսի թղթում: Եթե՛ նկատի ունենանք, որ Պօղոսը եւ Ղուկասը միասին են եղել եւ գործել, ապա գրեթե՛ անհաւանական է, որ երկու անձ, որոնք միասին են մտածել եւ նկարագրել երեւոյթները, միեւնոյն բառի տակ տարբեր իմաստներ հասկանային:

Հարցադրումը հետեւեալն է. ի՞նչ լեզուով են խօսել կորնթացիները: Մարդկային լեզուներով, թե՛ անհիմաստ, էքստատիկ լեզուներով, որոնք անհասկանալի են եղել կորնթացիներին, կամ միգուցե՛ հրեշտակային լեզուով, որի մասին ակնարկում է առաքելայր ԺԳ. գլխի առաջին համարում: Բնական է, կապը ժամանակակից գլոսա-

լալների եւ Հոգեգալստի ժամանակ Ս. Հոգու շնորհի հետ անհնար է գտնել, այն ուղղակի չկայ. Հոգեգալստեան շնորհը ոչ մի կապ չունի էքստատիկ վիճակում գտնուող մարդու բարբաջանքի հետ: Այդ թնջուկից դուրս գալու համար մնում է միակ ելքը. Գործքի եւ կորնթացիների լեզուները տարբեր դասերի են պատկանում: Առաջինը ընդհանուր է, երկրորդը՝ անհատական եւ պարտադիր չէ, որ լինի հասկանալի մարդկանց համար²: Անհատական շնորհի գաղափարն անշուշտ, փաստ չէ հիմնադրելու էքստատիկ բարբաջանքը: Օրինակ, բերում գրքում հեղինակն ասում է, որ անհատական աղօթքը պարտադիր չէ, որ հասկանալի լինի մարդկանց, քանի որ այն որպես երգ կամ աղօթք կարիք չունի թարգմանության: Հեղինակը՝ Տ. Կամպոլոն, յղում է տալիս Հռոմեացիների Ը. 26 համարին եւ Ա. Կորնթ. ԺԴ. 15-ին³, սակայն սխալ է այդ մտնեցումը, քանի որ Պողոսի ասած թարգմանությունը վերաբերում է նաեւ դրան:

Մէկ այլ հեղինակ՝ Նորման Գայզլեր, իր գրքում⁴ բերում է այն վեց փաստարկները, որոնց վրայ հիմնում է լեզուախօսության անհատական լինելու տեսակետը:

Դրանք են.

1. Քանի որ Կորնթացիների թուղթը գրուել է Գործքից յետոյ, հետեւաբար այդտեղ օգտագործում լեզուախօսությունը այլ կարգավիճակի եւ դրություն է պատկանում, այն անհատական դասի (կատեգորիայի) է պատկանում:

2. ԺԳ. 1 համարում Պողոսն օգտագործում է հրեշտակների լեզու դարձուածքը, հետեւաբար կորնթացիների լեզուն հէնց այդ հրեշտակային ոլորտին է պատկանում: Այսինքն՝ այդ լեզուները անհասկանալի եւ անթարգմանելի են:

3. ԺԴ. 4-ում այդ լեզուները կոչում են *անծանօթ*: Այսինքն՝ ոչ մէկը չպետք է հասկանար այդ լեզուախօսությունը:

4. ԺԴ. 2 համարում Պողոսը գրում է. «որովհետեւ, ով որ լեզուներ է խօսում, մարդկանց հետ չի խօսում, այլ՝ Աստծու հետ. քանզի չկայ մէկը, որ հասկանայ իրեն, բայց նա Հոգով արտայայտում է խորհուրդներ»: Այսինքն՝ այդ խօսակցությունը հասանելի եւ հասկանալի է միայն Աստծուն եւ պարտադիր չէ՝ ընկալելի լինի մարդկանց:

5. Հռոմ. Ը. 26-ի *անմոռնի հառաչանքով* խօսակցությունը հէնց կորնթացիների լեզուն է: Այսինքն՝ այդ *անմոռնի հառաչանքով*-ը անհնար է թարգմանել կամ հասկանալ:

6. ԺԴ. 2-ի առաջին մասում⁵ Պողոսն ասում է, որ այդ խօսքն ուղղում է Աստծուն եւ մարդը պարտաւոր չէ այն հասկանալ:

Թուարկած հարցերի պատասխանը ներկայացնում ենք ստորեւ:

² Տե՛ս օրիակ՝ **Tony Kampolo**, How to Be Pentecostal Without Speaking in Tongues (1991, Word Publishing), էջ 31-32, 40:

³ Անդ:

⁴ **Norman Gelsler**, Signs and Wonders (Tyndale, 1988), էջ 165-168:

⁵ «որովհետեւ, ով որ լեզուներ է խօսում, մարդկանց հետ չի խօսում, այլ՝ Աստծու հետ. քանզի չկայ մէկը, որ հասկանայ իրեն»:

1. Պնդել, թե Կորնթացիների Ա. թուղթը գրուել է Գործքից յետոյ, անհիմն է: Միանգամայն հակառակը. Գործքն է գրուել Ա. Կորնթացիների թղթից յետոյ⁶: Նշուած աղբիւրներում տրուած թուականները, թէւ տարբերում են իրարից, բայց ընդունում են, որ Գործքը գրուել է մօտ 63-65 թուականներին, իսկ Կորնթացիների Ա. թուղթը՝ մօտ 55 թուականին: Այսինքն՝ ամենաքիչը 8-10 տարուայ ժամանակահատուած է առկայ: Այս նշանակում է, որ Գործքի մէջ օգտագործուած լեզուները, որոնց քննութիւնը ներկայացուեց նախորդ յօդուածներում, բացառապէս Հոգեգալստեան ժամանակ հասկանալի լեզուներն էին, հետեւաբար եւ Կորնթացիների թղթում լեզուները չեն կարող լինել ինչ-որ անհատական բնոյթի: Ղուկասը լինելով Պօղոսի աշակերտը եւ հետեւորդը չէր կարող էապէս տարբեր իմաստով հասկանալ *լեզու* բառը, քան իր ուսուցիչը՝ Պօղոս առաքեալը: Մանաւանդ որ Ղուկասը յայտնի է իր տուած տեղեկութիւնների հաւաստիութեամբ ու վաւերականութեամբ⁷:

2. Հրեշտակների լեզուի հարցը: Այստեղ բնականօրէն պիտի ենթադրել, որ Առաքեալը օգտագործում է չափազանցական ոճ (հիպերբոլա), աւելի արտայայտիչ ձեւով շեշտելու ասածը: Օրինակ, երբ մէկն ասում է՝ հազար անգամ ասացի ... ամենեւին էլ չի նշանակում ճիշտ հազար անգամ, այլ՝ մի քանի անգամ: Բայց եթէ Պօղոս առաքեալը նկատի ունէր բառացի իմաստով հրեշտակների խօսակցական լեզուն, ապա այդ դէպքում անգամ իրողութիւնը չի փոխում: Իրօք, տրամաբանօրէն այդ դէպքում հնարաւոր է երկու տարբերակ.

ա. հրեշտակային լեզուն անհասկանալի ու թարգմանութեան չենթարկուող լեզու է, ինչպէս ուզում են այդ ներկայացնել մերօրեայ խարիզմատները, եւ

բ. սովորական գոյութիւն ունեցող լեզու:

Սակայն Ս. Գիրքը միանշանակ է տալիս դրա պատասխանը: Այստեղ էլ հնարաւոր է երկու տարբերակ.

1. հրեշտակների խօսելը մարդկանց հետ եւ

2. հրեշտակների խօսելը իրար հետ:

Առաջին դէպքում նրանք խօսում են մարդկանց հետ սովորական, հասկանալի լեզուով, իսկ երկրորդ դէպքում էլ՝ համաձայն սուրբգրային համապատասխան նկարագրութեան՝ դարձեալ հասկանալի լեզուով: Այդպէս Ղուկաս աւետարանիչը Բ. գլխի 10, 13-14 համարներում գրում է.

«Եւ սա՛ ձեզ համար նշան կը լինի. խանձարուրով փաթաթած եւ մտուրի մէջ դրուած մի մանուկ կգտնէք»: Եւ յանկարծակի այդ հրեշտակի հետ երեւաց երկնային զօրքերի մի բազմութիւն, որ օրհնում էր Աստծուն ու ասում. *«Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում, եւ երկրի վրայ խաղաղութիւ՛ն եւ հաճութիւ՛ն մարդկանց մէջ»:*

⁶ Տե՛ս Եզկիկ Ծ. 4րդ. Պետրոսյան, Ներածություն Նոր Կտակարանի, Ս. Էջմիածին, 1994, էջ 68, 88: Սաւել «The Bible Commentary, by F. Davidson», London, 1967, p. 897, 968:

⁷ Տե՛ս օրինակ Ղուկ. Ա. 3 եւ Գործք Ա. 1-3:

Բ. 15 համարում հովիները որոշում են գնալ Բեթղեհեմ, այսինքն՝ նրանց հասկանալի էր դարձել հրեշտակային լեզուն:

3. Եթե ստուգենք Ա. Կորնթ. ԺԴ. 4 համարի բնագիրը կամ մեր գրաբարը, ապա կտեսնենք, որ բացակայում է *անծանօթ* բառը, այսինքն՝ այդ բառը յետագայի յաւելում է, որ մէջտեղ է եկել անգլերէն թարգմանութիւններում, եւ այն ընդգծել է, որ բնագրային չէ⁸:

Ահա յունարէնը.

ὁ λαλῶν γλώσση ἑαυτὸν οἰκοδομεῖ· ὁ δὲ προφητεύων ἐκκλησίαν οἰκοδομεῖ.

Ինչպէս տեսնում ենք, իրօք այդ անծանօթ *անծանօթ* բառը չկայ:

Թարգմանիչները այդ բառը աւելացնելով կարծել են թէ տեքստը աւելի հասկանալի կը դառնայ, մինչդեռ հակառակը, աւելի անհասկանալի է դարձել, եւ սխալ մեկնութիւնների առիթ տուել, որ իբր կորնթոսեան լեզուները այլ դասի՝ կատեգորիայի են պատկանում: Մեր աշխարհաբարում նոյնպէս այդ բառը չկայ, քանի որ գրաբարը յունարէնից է թարգմանուել, ուր չկայ այդ *անծանօթ* բառը:

(Շարունակելի)

ՂԵԻՈՆԴ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՅԻԼԵԱՆ

⁸ Անգլերէնն է՝ *He that speaketh in an [unknown] tongue edifieth himself; but he that prophesieth edifieth the church.* Գրաբարն է՝ *Որ խօսի ի լեզուս, աննծն իւր շինէ. եւ որ սարգարէանայ, գեկեղեցին շինէ:*